դաշնակցական–ժողովրդական գործակցությունը։ Այս հողի վրա և սկսեցին բանակցությունները։

Բանակցությունների ընթացքում ժողովրդականներին ավելի հետաքրքրում էր նախարարական աթոռների թիվը, քան քաղաքական սկզբունքային հարցերը։ Նրանք պնդում էին, որ իրենց յանձնեն արտաքին, եկեղեցական, դատական և հանրային կրթության նախարարությունները, իսկ զինուորական նախարարը լինի անկուսակցական մէկը։ Վերջին չորս կէտերը Դաշնակցությունն ընդունեց, իսկ արտաքին գործոց նախարարությունը վերապահեց իրեն։

Ընդհանուր–սկզբունքային խնդիրներից ժողովրդականները մինչև վերջ պնդեցին մէկ կէտի վրա — որ հողային հարցի լուծումը յետաձգուի մինչև Սահմ. ժողով կամ համաժողովրդական քվէով ընտրուած խորհրդարանի գումարումը։ Դաշնակցությունը այս հարցում զիջեց։

Ժողովրդականները առարկում էին և՛ Արամի ու Ա. Խատիսեանի կառավարական կազմի մէջ մտնելու դէմ. այս պահանջը Դաշնակցությունը մերժեց։

Ի վերջոյ, կօալիցիան դուրս եկաւ և Հայ.Խորհրդի նոյ. 4–ի նիստում՝ դաշնակցական ու ժողովրդական պատգամաւորների քվէներով ընդունուեց Ց. Քալաշնունիի կառավարութեան հրաժարականը և Դ. Զուրեանի ու Հ. Ազատեանի կրքոտ քննադատութիւններից յետոյ յանձնարարուեց նոյն Քալաշնունիին կազմել նոր կառավարութիւն։ Նոյն նիստում հէնց Քալաշնունին յայտարարեց նոր կառավարութեան կազմը. անպորտֆէյլ վարչապետ՝ Ց. Քալաշնունի (դաշն.), արտաքին գործոց նախարար՝ Ս.Տիգրանեան (դաշն.), օգնական՝ Գ.Մելիք–Ղարագէոզեան (ժող.), ներքին գործոց՝ Արամ (դաշն.), զինուորական՝ զօր. Ց. Հախվերդեան (անկ.), եկեղեցական՝ Ա. Էնֆիաջեան (ժող.), արդարադատութեան՝ Ս.Ցարուբիանեան (ժող.), հանրային կրթութեան՝ Մ. Աթաբէգեան (ժող.), պարենաւորման՝ Լ. Ղուլեան (ժող.), խնամատարութեան՝ Խ. Կարճիկեան (դաշն.)։

Պետական վերահսկիչ Հայ. Խորհրդի կողմից, սոց.–յեղ. և սոց.–դեմ.–ների ձեռնպահութեամբ, ընտրուեց Մինաս Բերբերեանը (ժող.)։

Ինչպէս յոյց են տալիս անունները, կառավարութիւնը բաւական ուժեղ կազմ ունէր։ Բոլոր նախարարները դարգացած ու հեղինակաւոր գործիչներ էին։ Ժողովրդականների մէջ կենտրոնական անձը Ս. Ցարուբիանեանն էր՝ Թիֆլիսի յայտնի փաստաբաններից մէկը, պատրաստուած, Հայաստանի պայմաններն ու հայ իրականութիւնը լաւ ճանաչող, աշխատունակ ու հայ բուրժուական խաւերում մեծ ազդեցութիւն ունեցող մի գործիչ։ Հայկական ու ռուսական շրջաններում լայն կապեր ունեցող, գրական ու հասարակական ջիղի տէր, հայրենասէր ու ձեռնհաս գործիչ էր և պետական վերահսկիչ Մ. Բերբերեանը։

Նոր կառավարութիւնը հասարակութեան կողմից ընդունուեց, իբրև մի քայլ դէպի աջ, զիջում բուրժուական խաւերին. «Հայաստանի Խորհրդի